դական որդւոցս իմոց, տարագրելոց ի սփիւռս երկրի, խոշտանգեալ ի Միջագետս, արևակէզ ի Սիւրիա։

Աղաչեմ զԱստուած, օրհնել զՔեզ և զամենեսեանդ ի գործ բարի, շնորհելով մէն միում ի ձէնջ սիրտ սուրբ և հոգի բարի, եռանդ և ջան՝ ի շինութիւն և ի բարիոք կանգնումն հասարակաց արդիւնաւոր կենցաղոյն, յոր կոչեցաք մշակք պիտանաւորք։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր, օրհնեալ ի Մէնջ յաւէտ. Ամէն։

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 25 յուլիսի 1916 ամի
Ըստ տոմարիս ՌՅԿԵ
ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
ի Տփխիս.
Թ. 1586

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ օրհնութեան Նոր-Բայազիտի գաւառի Փաշաքեանդ գիւղի դպրոցական շինութեան Յանձնաժողովի անդամների՝ Դեղամ քահանայ Տէր Սիմէօնեանի, Սարգիս Դաշտոյեանի, Յակոբ Զանէեանի, Պօղոս Սարգսեանի, Կարապետ Աւետսեանի, Խաչատուր Պօղոսեանի, Մաղաքիա Դաշտոյեանի և Սիրական Յարութիւնեանի անունով՝ 1915 թ. ընթացքում միահամուռ ջանքերով դպրոցական շէնքը սկսելու և վերջացնելու առթիւ։ 2 մայիսի, թ. 990։

Դիւանի գրութիւն Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվազեանի անունով, որով, համաձայն Նորին Վեհափառութեան հրամանի, յանձնարարուեց քահանայ ձեռնադրել Ղարա-

բաղի թեմի Խանքենդ աւանի համար, Մշկապատ գիւղացի Աստուածատուր սարկաւագ Ադամեանին։ 2 մայիսի, թ. 993։

Գրութիւն պ. Պետրոս Անդրէասեան Մանուշակեանի անունով, որով յայտնուեց Նորին Ս. Օծութեան գոհունակութիւնն ու Հայրապետական օրհնութիւնը՝ Լուգանսկի հայ գաղութի կողմից զանազան ժամանակներում հայ գաղթականների օգտին դրամներ փոխադրելու համար։ 3 մայիսի, թ. 995։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տաթևի փոխանորդի փոխադրած, Գօրիսեցի Փառանձեմ Միրումեանից, ստացած յօգուտ հայ գաղթականների—30 ռ. և Հայաստանի վերաշինութեան՝ 30 ռուբլի, ընդամենը վաթսուն ռուբլի, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 3 մայիսի, թ. 997։

Գրութիւն Դիւանի յանուն Տփխիսի կենտրոնական Հայոց Կոմիտէի, որով յայտնուեց, որ Սիլիստրիայի Հայոց Հանգանակիչ Յանձնախմբից Նորին Սրբութիւնը ստացել է երկու նուագում (1915 թ. և 1916 թ.) երկու հազար ռուբլի, որպիսի գումարը յանձնուած է Սինոդին և վերջինիս կողմից պատշաճ ապահովագիրը ժամանակին ուղարկուել են Յանձնախմբի Ատենապետ Մինասեանին։ 3 մայիսի, թ. 999։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պուքրէշի «Ազգային Համագործակցական Արմենի» փոխադրած հինգ հարիւր վաթսուն և ինն ռուբլի 55 կ. (569 ռ. 55 կ.) պատուիրելով մուծել մատեան յօգուտ հայ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 3 մայիսի, թ. 1000։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Աստրախանի թեմի Ս.Ֆանասևսկի-Պոստիկի Յանձնաժողովի փոխադրած վաթսուն և մի ռուբլի 40 կոպ. (61 ռ. 40 կոպ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ

հայ գաղթականների և որբերի և անդորրագիրն ուղարկել Ցանձնաժողովին։ 4 մայիսի, թ. 1002։

Նորին Սրբութեան մակագրութիւնը Կոյրերի Հոգաբարձութեան 1916 թ. մայիսի 3-ի թ. 117 գրութեան վրայ. «Պատուիրում ենք Ս. Էջմիածնի Սինոդին շրջաբերականներով ի մօտոյ յանձնարարել բոլոր Ռուսահայոց թեմական Առաջնորդներին, որ հայոց եկեղեցիներում յօգուտ կոյրերի գանձանակ շրջեցնեն Սինոդիդ կողմից որոշուած կիւրակէին և գոյացած դրամն ուղարկեն Ատենիդ՝ հասցնելու ըստ պատկանելոյն։ Կարգադրութեան մասին տեղեկութիւն տալ Կուրաց Հոգաբարձութեան»։ 6 մայիսի, թ. 1008։

Գրութիւն Դիւանի Ս. Էջմիածնի Եղբայրական-Օգնութեան Ցանձնաժողովի անունով, որով յանձնարարուեց, Նորին Վեհափառութեան բարեհաճ կարգադրութեան համաձայն, փոխադրել Տփխիսի Հայ Երաժշտական Ընկերութեան անունով՝ Նորա խնդրի համեմատ, մի հազար (1000) ռուբլի՝ Թիւրքահայ ժողովրդի երաժշտական ճնացորդները և երկերը գրի առնելու համար։ 7 մայիսի, թ. 1017։

Կոնդակ Տ. Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի, Մատթէոս եպիսկոպոսի, Սահակ վարդապետ Ամատունու և Գէորգ վարդապետ Չէօրեքչեանի անունով, որով յանձնարարուեց պատրաստել առանց սխալների, Մայր Աթոռի տպարանում տպագրել տալու համար Մայր Մաշտոց մատեանը, համեմատելով հին ձեռագրերի հետ և վերջնականապէս խմբագրելուց յետոյ՝ ներկայացնել Նորին Սրբութեան ի տես և ի հաւանութիւն։ 7 մայիսի, թ. 1019։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին՝ կարգել Մայր Աթոռի ագարակի տեսուչ Տ. Արիստակէս վարդապետի փոխարէն Երնջակի վանքի միաբան տիրացու Արշակ Դաւթեանին, որ վերջին տարիներում ապրում էր Սևանում։ Վանական Կառավարութեան ձեռ-

քով կարգադրել, որ շարժական և անշարժ գոյքի յանձնողական–ստացողական արձանագրութիւնը լինի Կառավարութեան մի անդամի ներկայութեամբ և մայիսի 1-ից տալ Դաւթեանին ամսական, որպէս ռոճիկ և սննդադրամ —քառասուն (40) ռուբլի։ 9 մայիսի, թ։ 1023։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Գէորգիևսկի Ներսէս քահանայ Վարդանեանի փոխադրած մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 9 մայիսի, թ. 1024։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի անունով, որով ուղարկուեց պահելու մատենադարանում մի հատ մագաղաթեայ արծաթապատ ձեռագիր աւետարան, որ ներկայացրել է Նորին Սրբութեան Ռուբէն քահանայ Բէկզիլեանը և որ գտնուել է Կարնոյ Ս. Աստուածածին եկեղեցում՝ երևցած Մխիթար գիւղի Տ. Աշոտ քահանայի արկղի մէջ (ՌՃԻԲ=1673 թ.)։ 9 մայիսի, թ. 1025։

Դիւանի գրութիւն Ատրպատականի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի անունով, որով յայտնուեց, որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց թոյլատրել կարգել Համադանի Խորէն քահանայ Վարդանեանին ժամանակաւոր փոխանորդ Ուրմիայի, համաձայն Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի միջնորդութեան։ 9 մայիսի, թ. 1028։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին տալ Ատրպատականի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսին՝ յօգուտ գաղթականական նորաբաց դպրոցների միանուագ նպաստ մի հազար (1000) ռուբլի։ 9 մայիսի, թ. 1031։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Դպրոցական գրամագլխի տոկոսներից Էջմիածնի

նի գաւառի Բիւրական գիւղի հայոց եկեղեցական ծխական դպրոցին նպաստ տարեկան երկու հարիւր (200) ռ.։ 11 մայիսի, թ. 1035։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Հին Նախիջևանի փոխանորդ Սիօն վարդապետի մայիսի 4-ի թ. 172 յայտարարութեամբ փոխադրած մի հազար երկու հարիւր (1200) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան Ս. Ստեփաննոս Կարմիր վանքի դրամագլխի օգտին և անդորրագիրն ուղարկել փոխանորդին։ 11 մայիսի, թ. 1036։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Պատերսոն քաղաքից Կ. Ունիկեանի փոխադրած մի հարիւր յիսուն և հինգ ռուբլի 46 կոպ. (155 ռ. 46 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել Նուիրատուին։ 12 մայիսի, թ. 1045։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Արգենտինայի Կորդոբա քաղաքի առժամեայ յանձնախմբի փոխադրած երեք հազար հինգ հարիւր չորս ռուբլի 20 կ. (3504 ռ. 30 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և հայ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 մայիսի, թ. 1046։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Փրովիդենս քաղաքի Լուս. Ուսումն. Ընկերութեան Վարչութեան փոխադրած մի հազար քառասուն և երեք ռուբլի 33 կ. (1043 ռ. 33 կ.)։ պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 մայիսի, թ. 1047։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայից «Հայրենիք» թերթի խմբագրութեան միջոցով՝ Կանադայի Կոլթարնակ մի կարգ հայերի փոխադրած քառասուն և չորս ռուբ. 85 կ. (44 ռուբ. 85 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների

և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 մայիսի, թ. 1048։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Բոստոնի Հայ Ցանձնախմբի փոխադրած հինգ հարիւր եօթանասուն վեց (576) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 մայիսի, թ. 1049։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայից «Հայրենիք» թերթի խմբագրութեան միջոցով Ռէյսինաբնակ Վանեցիների փոխադրած ութ հարիւր քառասուն և մի ռուբ. 10 կ. (841 ռ. 10 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 մայիսի, թ. 1050։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լուգանսկից Պետրոս Անդրէասեան Մանուշակեանից փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 12 մայիսի, թ. 1051։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նոր Նախիջևանի Հայազգի Ազգատաց Եկեղեցական Հոգաբարձութեան միջոցով վաճառական Միքայէլ Մեքոնեանի փոխադրած, ի յիշատակ իւր Նորածին Գաբրիէլ որդու, մի հազար (1000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 մայիսի, թ. 1052։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի միջոցով Տագանրոգի Յովհաննէս քահանայ Օգսենտեանի փոխադրած երկու հարիւր երեսուն եօթ ռուբլի 75 կ. (237 ռ. 75 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 13 մայիսի, թ. 1054։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով Ղզլարցի Անթառամ Կոստապրաւեանի փոխադրած, ի յիշատակ իւր վաղամեռ Ստեփան որդուն տասն (10) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 13 մայիսի, թ. 1055։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Դպրոցական դրամագլխի տոկոսներից, Տրփխիսի թեմի, Ղազախի գաւառի, Թալա գիւղի Հայոց եկեղեցական-ծխական դպրոցին նպաստ տարեկան մի հարիւր (100) ռուբլի, Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի միջոցով։ 14 մայիսի, թ. 1056։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Դանձակի Պետական դպրոցի աշակերտ աշակերտուհիների կողմից Գրիգոր Թումանեանի փոխադրած երեսուն և հինգ (35) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 16 մայիսի, թ. 1067։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ախալցխայից Լևոն Գաբոյեանի փոխադրած, ի յիշատակ հանգուցեալ Մահտեսի Ջալապեանի, մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 16 մայիսի, թ. 1068։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նուշու Մորէն քահանայ Իսկեանդարեանի փոխադրած, Աբել Աղախանեանի նուիրած, քսան (20) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 16 մայիսի, թ. 1069։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնա-

ժողովի ազարակի կառավարիչ Տ. Վրթանէս վարդապետի ներկայացրած՝ վաճառած ոչխարների եայլն գինը—երեք հազար ութ հարիւր յիսուն (3850) ռուբլին, պատուիրելով մուտք գրել մտից մատեանում յօգուտ գաղթականների։ 16 մայիսի, թ. 1070։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի ներկայացրած գաղթականների օգտին ստացուած պետական նպաստ՝ վաթսուն և չորս հազար հինգ հարիւր տասն և չորս (64514), պատուիրելով մուտք գրել մտից մատեանում։ 16 մայիսի, թ. 1071։

Նորին Սրբութեան մակագրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի մայիս 16-ի թ. 644 յայտարարութեան վրայ. «Պատուիրում ենք Ս. Էջմիածնի Սինոդին յօգուտ գաղթականների փոխադրուած պետական նպաստի գումարից՝ վաթսուն և չորս հազար հինգ հարիւր տասն և չորս (64514) ռուբլու վարկ բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով»։ 16 մայիսի, թ. 1072։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին յանձնել Պաս գիւղացի Մարգար Յակոբեանին Օդեսայից Խաչիկ Յակոբեանի փոխադրած 35 ռուբլին, որ յանձնուած է Սինոդ Նորին Վեհափառութեան 1915 թ. հոկտեմբ. 28-ի № 1885 մակագրութեամբ և մուտք գրուած յօգուտ գաղթականների։ 17 մայիսի, թ. 1074։

Դիւանի գրութիւն Աստրախանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց յայտնել Ղզլար քաղաքի Հայոց ծխականներին, որ Նորին Վեհափառութիւնը, բարեհաճեց թոյլատրել Կորիւն քահանայ Պանջուլաղեանին փոխադրուել Երևանից Ղզլար։ 17 մայիսի, թ. 1079։

Դիւանի գրութիւն Երևանի փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց յայտնել

Կորիւն քահանայ Պանջուլաղեանին, որ Նորին Սրբութիւնը թոյլատրեց Երևանից փոխադրուել Ղզլար քաղաք։ 17 մայիսի, թ. 1080։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մելիտոպոլ քաղաքի Հայոց Կոմիտէի Նախագահ Վահան աւ. քահանայ Մամիկոնեանի փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով մուծել մտից մասեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 17 մայիսի, թ. 1081։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան յանձնաժողովի անունով յիսուն հազար (50000) ռուբլու վարկ՝ անհրաժեշտ ծախքերը հոգալու համար։ 18 մայիսի, թ. 1083։

Կոնդակ Սինոդի անունով, որով յայտնուեց, որ Անուանական Բարձրագոյն Հրամանով, յանուն Կառավարիչ Սենատի, անցած ապրիլի 30-ին, կարգուած են՝ Տ. Բագրատ եպիսկոպոս Վարդապետեան Շամախու թեմի Առաջնորդ, Տաթևի փոխանորդ Տ. Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան Ժամանակաւոր Կառավարիչ Ղարաբաղի Հայոց թեմի, իսկ Տ. Զաւէն վարդապետն արձակուած է Ղարաբաղի թեմի Ժամանակաւոր Կառավարչի պաշտօնից և Տ. Տիրայր վարդապետ Տէր-Յովհաննիսեան ու Նոր-Նախիջևանի Փոխանորդ Տ. Գէորգ վարդապետ Զէօրեկչեան՝ Ս. Էջմիածնի Սինոդի անդամներ, ուստի և ուղարկելով Նորին Կայսերական Բարձրութեան Կովկասի Փոխարքայի թ. 15214 գրութեան վաւերական պատճէնը, պատուիրուեց արժանին տնօրինել։ 20 մայիսի, թ. 1087։

Կոնդակ Տ.Տ. Գարեգին ծ. վարդապետի, Վրթանէս վարդապետի և Գէորգ վարդապետ Զէօրեկչեանի և Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի ուսուցիչներ՝ պ. պ. Աւետիք Տէր Պողոսեանի և Լևոն Գեանջեցեանի անունով, որով կարգուեցան Մայր Աթոռի Կենտրոնական Ուսումնա-

բանական Ցանձնաժողովի անդամներ, Տ. Գարեգին Ծ. վարդապետի նախագահութեամբ։ 20 մայիսի, թ. 1088։

Դիւանի գրութիւն Տ. Բագրատ եպիսկոպոսի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութեան թ. 1088 կոնդակով լուծուած համարուեց նորա նախագահութեամբ կազմուած Կենտրոնական Ուսումնարանական Ցանձնաժողովը, յանձնարարելով բոլոր գործերն ու մատեանները յանձնել նոր կազմուած Ցանձնաժողովին։ 20 մայիսի, թ. 1091։

Կոնդակ օրհնութեան Աղէքսանդրապոլի գաւառի Մեծ-Ղարաքիլիսա գիւղի և շրջանի գործակալ Խորէն աւագ քահանայ Խանզադեանի անունով՝ նորա ուսուցչական գործունէութեան քառասնամեայ յոբելեանի առթիւ, որ լրացել է այս մայիս ամսի 22-ին։ 21 մայիսի, թ. 1094։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան անունով, որով յանձնարարուեց տալ Վանի Աւանս գիւղի երեսփոխան Աւետիս Խաչատրեանին մի հատ Աւենի ժամագիրք։ 23 մայիսի, թ. 1097։

Դիւանի գրութիւն Երևանի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով, որով յանձնարարուեց՝ համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, փոխադրել յանուն Հին-Նախիջևանի փոխանորդ Տ. Սիօն վարդապետի գրամ, որպէս զի հոգացուի Հին-Նախիջևանի շրջանն ապաստանած գաղթականների կարիքները։ 23 մայիսի, թ. 1099։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով, որով յանձնարարուեց, համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, փոխադրել Տփխիսի Դիւղատնտեսական Ընկերութեան տան և հինգ հազար (15000) ռուբլի՝ Տաճկաստան ուղարկելու համար գերանդի և այլ երկրագործական իրեր գնելու համար։ 23 մայիսի, թ. 1102։

Դիւանի գրութիւն Ամերիկայի Հայոց Առաջնորդ Տ.

Արսէն Ծ. վարդապետ Վեհունու անունով՝ որով ուղարկելով Նորին Սրբութեան օրհնութեան և գոհունակութեան կոնդակը Միացեալ Նահանգների Նախագահ Վ. Վիլսոնին ուղղած՝ յանձնարարուեց պատշաճ եղանակով և առանձին պատգամաւորութեան միջոցով ներկայացնել այն պ. Նախագահին։ 23 մայիսի, Թ. 1103։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայից Բղլի Հողու գիւղի Դպրոցասիրաց Ընկերութեան Պետրոգրադի Ռուս-Ասիական բանկի միջոցով փոխադրած մի հազար վեց հարիւր քսան և ինն (1629) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 24 մայիսի, Թ. 1106։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Բոնկորտի քաղաքի ժողովրդեան Յանձնախմբի փոխադրած մի հարիւր քսան և չորս (124) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 24 մայիսի, Թ. 1107։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եօրքից Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան փոխադրած երկու հազար եօթանասուն և հինգ ռուբլի 04 կ. (2075 ռ. 04 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 24 մայիսի, Թ. 1108։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եօրքից Բաբերդցի Գրիգոր Փոլադեանի փոխադրած երեք հարիւր երեք (303) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 24 մայիսի, Թ. 1109։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Վրաստանի Հայոց Առաջնորդի փոխադրած մի հազար քսան և հինգ ռուբ. 82 կ. (1025 ռ. 82 կ.), որ

գոյացել է Վասպուրականի վանքերի Տփխիսում գտնուած եկամուտներից, պատուիրելով կարգադրել յանձնել այդ գումարը ըստ պատկանելոյն։ 24 մայիսի, թ. 1110։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բուխարեստից Սպենդեանի փոխադրած եօթ հարիւր յիսուն (750) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 24 մայիսի, թ. 1111։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Աքքերմանի հայ հասարակութեան ծխատէր Երեմիա քահանայ Ապրիլեանի միջոցով փոխադրած երեք հարիւր (300) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 24 մայիսի, թ. 1112։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին 1915 թ. օգոստոսի 11-ի թ. 1284 մակագրութեամբ Սինոդին յանձնած 40 ռ., որ ստացուած էր Սոֆիայից Աղաջան Կակոսեանից, տալ Գարեգին Ծ. վարդապետին, որպէս զի հասցնի Վանեցի Արմենուհի Կակոսեանին, համաձայն Աղաջան Կակոսեանի խնդրի։ 24 մայիսի, թ. 1113։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Դպրոցական դրամագլխի տոկոսներից, Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի միջոցով, Զխալի գիւղի հայոց ծխական դպրոցին իբրև միանուագ նպաստ երեք հարիւր (300) ռուբլի։ 25 մայիսի, թ. 1121։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետի անունով, որով ուղարկուեց Մատենադարանում պահելու համար Ուչքիլիսէ (Բաղրեանդ) Ս. Յովհաննու վանքից՝ Յովհաննէս քահանայ Տէր Յովհաննիսեանի բերած, Ս. Մանուկ Աւետարանը։ 25 մայիսի, թ. 1128։

Դիւանի գրութիւն Մայր Տաճարի Լուսարարապետի անունով, որով ուղարկուեց Մայր Տաճարում պահելու

համար Բագրեւանդի Ուշքիլիսէ Ս. Յովհաննու վանքից— Յովհաննէս քահանայ Տէր Յովհաննիսեանի բերած մի հատ «Վարշաւեայ» սկիհ։ 25 մայիսի, թ. 1129։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Վոթերբուրի քաղաքի Հայ-Ամերիկական Դաշնակցութեան փոխադրած երեք հազար մի հարիւր (3100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 մայիսի, թ. 1139։

Կոնդակ Ընդհանրական Համախու Հայոց թեմի հայ հոգևորականութեան և ժողովրդի անունով, որով յայտնելով Տ. Բագրատ եպիսկոպոսի առաջնորդ կարգուիլը՝ յորդոր կարդացուեց բարոյական աջակցութիւն ցոյց տալ նոր կարգուած առաջնորդին, որպէս զի նա կարողանայ կատարել իւր վրայ դրած ծանր պարտականութիւնը։ 26 մայիսի, թ. 1141։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Սուլտա գիւղի Հայոց Ծխական դպրոցին, Դըպրոցական դրամագլխի տոկոսներից, Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի միջոցով, իբրև միանուագ նպաստ, դպրոցական շէնքի կիսատ մասը աւարտելու համար, երեք հարիւր (300) ռուբլի։ 27 մայիսի, թ. 1146։

Դիւանի գրութիւն յանուն Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի անունով, որով յայտնուեց, համաձայն Նորին Սրբութեան բարեհաճ կարգադրութեան, Հին Խրիմի Ս. Խաչ վանքի հսկողութիւնը յանձնել ժամանակաւորապէս Դաւիթ քահանայ Փէշիշեանին, մինչև որ յարմարաւոր վանահայր կկարգուի։ 28 մայիսի, թ. 1156։

Դիւանի գրութիւն յանուն Երևանի Կոնսիստորիայի, որով առաջադրուեց, Նորին Սրբութեան հրամանի համաձայն, անմիջապէս հեռացնել Փամբակի Սիպտակ գիւղում ապրող գաղթական Աբրահամ Կարապետեանի մօտից երկ-

ղորդ ապօրինի կնոջը, քննութեամբ պարզել, թէ ո՞ր քահանան է պսակել նորան այդ ապօրինի կնոջ հետ և ենթարկել օրինական պատասխանատուութեան, իսկ եկեղեցական ապաշխարանքի ենթարկել Աբրահամ Կարապետեանին՝ նորա տգեղ և ապօրինի արարքի համար։ 31 մայիսի, թ. 1164։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Արմաւիր քաղաքի կրօնուսոյց Արսէն քահանայ Հալաճեանի անունով, որով, համաձայն Կուբանեան շրջանի պետական դպրոցների 3-րդ մասի Տեսչի միջնորդութեան, Կամիլաւկա գլխարկ կրելու իրաւունք շնորհուեց։ 26 մայիսի, թ. 1141։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 20-ի, թ. 1087, կոնդակը, որոշեց. նախ՝ պատուիրել Տ. Բագրատ եպիսկոպոսին գնալ իւր նոր պաշտօնատեղին, ընդունել Շամախու Կոնսիստորիայի Ատեանում օրինասահման երդումն և ստանալ Կոնսիստորիայից ցուցակով Առաջնորդական գործերն ու գոյքը և վարել Առաջնորդական պաշտօնը. այդ մասին հրաման տալ յիշեալ Կոնսիստորիային, պատուիրելով վճարել նոր Առաջնորդին ռոճիկ շտատով, սկսած Բարձրագոյն հրամանի օրից և ճանապարհածախք վիճակային արդիւնքից, համաձայն 1913 թ. յուլիսի 8-ի, թ. 1481, շրջաբերականի Ա. հատուածի ա. և բ. կէտերի. երկրորդ՝ պատուիրել Տ. Վահան վարդապետ Տէր Գրիգորեանին յանձնելով ցուցակով Տաթևի փոխանորդական գործերը և գոյքը Հոգևոր Կառավարութեան՝ գնալ իւր նոր պաշտօնատեղին և ստանձնել ու վարել Ղարաբաղի թեմի Ժամ. Կառավարչի պաշտօնը, ստանալով ցուցակով